ԿԵՐՊԱՐԿԵՍՏ 1

աշխատանքային գիրք-տետր



Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ 1

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐ

Հանրակրթական ուսումնական հաստատությունների

առաջին դասարանի սովորողների համար

Երևան-2023

ՀՏԴ
ԳՄԴ

Կերպարվեստ 1 աշխատանքային գիրք-տետր, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Երևան, 2023, 54 էջ։

Աշխատանքային գիրք-տետրը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից որպես ուսումնական նյութ։
Աշխատանքային գիրք-տետրը հրատարակության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից։

Գրախոսներ՝
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ազատյան Թ. Յու.
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Մուրադյան Ս. Վ.

Հեղինակներ՝
Սվաջյան Ա. Հ., մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Սարգսյան Ս. Մ., մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Պետրոսյան Ս. Ս.
Օհանյան Հ. Վ.
Համակարգչային ձևավորում՝ Սարգսյան Ս. Մ.

Սույն աշխատանքային գիրք-տետրի նպատակը հանրակրթական ուսումնական հաստատությունների առաջին դասարանի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին «Կերպարվեստ» առարկայի ուսումնառության ընթացքում լրացուցիչ, առավել պարզեցված և հարմարեցված ուսումնական նյութերի տրամադրումն է։

ISBN

ՀՏԴ
ԳՄԴ

Տպաքանակ՝ 150 օրինակ

©Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2023

ՆԱԽԱԲԱՆ

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսումնառության գործընթացում Կերպարվեստ առարկան ունի հոգեբանամանկավարժական, ինչպես նաև՝ միջառարկայական կապն ապահովող նշանակություն: Այդ իսկ պատճառով հանրակրթության մեջ կերպարվեստի հնարներն ու միջոցները դիտարկվում են ոչ միայն Կերպարվեստ առարկայի, այլև մյուս առարկաների համատեքստում: Հենց այդ տրամաբանությամբ էլ հանրակրթության մեջ հատուկ կարևորություն է ստանում կերպարվեստը՝ որպես համընդհանուր օժանդակության առարկա:

Կերպարվեստ առարկայի աշխատանքային գիրք-տետրի մշակման գործընթացում հաշվի են առնվել սովորողների գիտելիքների և կարողությունների ձևավորման ժամանակակից մոտեցումները, որոնց հիմքում ընկած է ոչ միայն ուսուցման շտկող-զարգացնող սկզբունքը, այլև հենց կերպարվեստի զարգացնող հնարավորությունները կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար: Հաշվի առնելով սովորողի ուսումնառության տվյալ փուլը, երբ երեխան դեռ կարդալ և գրել չգիտի, աշխատանքային գիրք-տետրում կիրառվել են պայմանական նշաններ և օրինակներ, որոնք կօգնեն նրան ըմբռնել առաջադրանքի բովանդակությունը: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ առաջադրանքների բովանդակությունը սովորողին հասանելի կդարձնեն մանկավարժը, ուսուցչի օգնականը կամ ծնողը:

Աշխատանքային գիրք-տետրի մեթոդական կառուցվածքն ուսուցչին հնարավորություն է ընձեռում իրականացնելու սեփական ստեղծագործական մտահղացումներն ու երևակայությունը, միաժամանակ արդյունավետ կիրառելու տարիների ընթացքում ձեռք բերած փորձը, իր կողմից մշակած հնարներն ու միջոցները: Կարևոր նախապայման է նաև սովորողի գործնական, ստեղծագործական ուսումնառության խթանումը, ինչն իրականացվում է հավելվածի օգնությամբ: Վերջինս հնարավորություն է տալիս սովորողին ընտրել, կտրել, փակցնել և կառուցել համապատասխան պատկերները:

Առաջադրանքներից մի քանիսը կազմված են այն տրամաբանությամբ, որ սովորողն աշխատի դասընկերոջ հետ խթանելով սոցիալ-հուզական ուսումնառությունը: Աշխատանքային գիրք-տետրում կատարվող առանձին աշխատանքներ կարող են նաև առանձնացվել և ներառվել սովորողի անհատական թղթապանակում:

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Աշխատանք գունավոր կամ հասարակ մատիտներով

- Աշխատանք ջրաներկով կամ գուաշով

- Ուսումնասիրության նյութ



- Տվյալ հատվածում փակցվում է համապատասխան նկարը

- Աշխատանք հավելվածի նյութերով

- Տվյալ առաջադրանքը տեղադրվում է աշակերտի անձնական թղթապանակում

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

Առաջադրանք 1. Ծանոթացի՛ր կերպարվեստի գործիքներին, նյութերին և անվանի՛ր։

Վրձին

Ռետին

Ջրաներկ



Գունավոր մատիտներ

Գուաշ

Հասարակ մատիտ

Կավճամատիտ



Յուղամատիտ

Ծեփամածիկ

Առաջադրանք 2. Կետագծերի վրայով գծի՛ր տարբեր ուղղությամբ գծեր:



Առաջադրանք 3. Տարբեր ուղղությամբ գծերով ավելացրու՛ արև, ծառ, ծաղիկ, սար և ավարտի՛ր բնանկարը:



Առաջադրանք 4. Միացրու՛ կետերը և ստացի՛ր վերևում տրված պատկերները։



Եռանկյուն

Ուղղանկյուն



Քառակուսի

Մեծ և փոքր շրջաններ



Առաջադրանք 5. Գունավոր եռանկյան մեջ գտնվող պատկերներից ստացի՛ր քառակուսի: Փակցրու՛ պատկերները համապատասխան տեղում (հավելված 1):



Առաջադրանք 6. «Տխուր» եռանկյան մեջ գտնվող պատկերներից ստացի՛ր «ուրախ» դիմակ: Փակցրու՛ պատկերները համապատասխան տեղում (հավելված 2):



Առաջադրանք 7. Դատարկ հատվածում նկարի՛ր համապատասխան երկրաչափական պատկերով առարկա: Կարող ես ստեղծագործել և ավելացնել դետալներ:








11 12 1
10 2
9 3
8 4
7 6 5






ZiBi



Առաջադրանք 8. Ճանաչի՛ր և անվանի՛ր գույները:

Հիմնական գույներ՝

Բաղադրյալ գույներ՝

Առաջադրանք 9. Եզրագծի՛ր երեք տարբեր երկրաչափական պատկերները, անվանի՛ր և յուրաքանչյուր պատկերը ներկի՛ր մեկ հիմնական գույնով: Ներքևի հատվածում նկարի՛ր նույն երկրաչափական պատկերից:



Առաջադրանք 10. Միախառնի՛ր երկու հիմնական գույները և ստացի՛ր բաղադրյալ գույներ: Անվանի՛ր ի՞նչ գույներ ես ստացել:



Առաջադրանք 11. Երեք հիմնական գույներով ներկի՛ր պատկերները: Անվանի՛ր ստացված գույնը: Գտի՛ր 1, 2, 3, 4 դաշտերի գույները և փակցրու՛ համապատասխան վանդակում (հավելված 3):



Առաջադրանք 12. Ուսումնասիրի՛ր շրջապատող միջավայրի առարկաները, անվանի՛ր, թե որոնք են հիմնական, որոնք՝ բաղադրյալ գույնի:

Առաջադրանք 13. Մատիտով միացրու՛ հիմնական գույնի առարկաները:

Առաջադրանք 14. Էջը ներկի՛ր կարմիր, կապույտ և դեղին գույնի մատիտներով:
Անվանի՛ր՝ ի՞նչ նոր գույներ ստացար:

Առաջադրանք 15. Էջը ներկի՛ր կարմիր, կապույտ և դեղին գույնի ջրաներկով:
Անվանի՛ր՝ ի՞նչ նոր գույներ ստացար:

Առաջադրանք 16. Ներքևի հատվածում կրկնի՛ր թիթեռի պատկերման հաջորդական քայլերը:



Առաջադրանք 17. Հաջորդական քայլերով պատկերի՛ր թեթեռ և գունավորի՛ր։

Առաջադրանք 18. Ջրաներկով գունավորի՛ր թիթեռի պատկերված կեսը, այնուհետև ծալի՛ր թուղթը գծանշված մասով և ստացիր մյուս կեսը: Անվանի՛ր թիթեռը և պատմի՛ր նրա մասին:

Առաջադրանք 19. Ուսումնասիրի՛ր դրոշի պատկերման հաջորդական քայլերը:



1 2 3 4



1 2 3 4

Առաջադրանք 20. Ըստ հերթականության պատկերի՛ր դրոշ և գունավորիր:

Առաջադրանք 21. Շարունակի՛ր նկարել և գունավորել դրոշը:



Առաջադրանք 22. Ճանաչ՛իր և անվանի՛ր մարմինները: Դատարկ հատվածում փակցրու՝ համապատասխան առարկան (հավելված 4):



Կոն

Կոնաձև գլխարկ



Գլան

Գլանաձև դհոլ



Գունդ

Գնդաձև ծաղկաման



Բուրգ

Բրգաձև քերիչ



Խորանարդ



Խորանարդաձև խաղալիք



Պրիզմա

Պրիզմայաձև մատիտ

Առաջադրանք 23. Ի՞նչ մարմինների են նման առարկաները: Ներքևի վանդակում նկարի՛ր համապատասխան պատկերը, այնուհետև փակցրու (հավելված 5):



Առաջադրանք 24. Եզրագծի՛ր մրգերը և գունավորի՛ր, այնուհետև փակցրու՛ համապատասխան միրգը (հավելված 6):



Առաջադրանք 25. Փակցրո՛ւ քարերը և շարունակի՛ր կառուցել պատը (հավելված 7):



Առաջադրանք 26. Գտի՛ր առարկաների կեսը և ամբողջացրու՛ նկարը (հավելված 8):

Առաջադրանք 27. Շարունակի՛ր նկարել և ամբողջացնել առարկաների տեսքը:

Առաջադրանք 28. Շարունակի՛ր նկարել մարգագետինը:

Առաջադրանք 29. Ուսումնասիրի՛ր մրգերի պատկերման հաջորդական քայլերը:



1 2 3 4



1 2 3 4

Առաջադրանք 30. Նկարի՛ր մրգերն ըստ հաջորդական քայլերի և գունավորի՛ր:

Առաջադրանք 31. Ի՞նչ տարբերություններ ես տեսնում ծառերի միջև:



Առաջադրանք 32. Գուաշի օգնությամբ մատնահետքերով ավելացրո՛ւ ծառի սաղարթը: Գունավոր մատիտներով շարունակի՛ր և ավարտի՛ր նկարը:



Առաջադրանք 33. Ընկերոջդ հետ ուսումնասիրի՛ր և անվանի՛ր պատկերների նմանություններն ու տարբերությունները:

Տերև → Ճյուղ → Ծառ

Առաջադրանք 34. *Ի՞նչ տարբերություններ ես տեսնում տերևների միջև, մատիտով ընդգծի՛ր դրանք:*



Առաջադրանք 35. Գուաշով ներկի՛ր տերևի մի կողմը տարբեր գույներով և դաջի՛ր թղթի վրա:

Առաջադրանք 36. Ի՞նչ ես տեսնում նկարում, ի՞նչը քեզ դուր եկավ ամենաշատը:

Առաջադրանք 37. Տերևների գունավոր դաջվածքով պատկերի՛ր անտառ, այնուհետև գունավոր մատիտներով ավարտի՛ր բնանկարը:

Առաջադրանք 38. Եզրագծի՛ր ձեռքիդ ափը թղթի վրա, այնուհետև տարբեր ուղղության ու տարբեր ձևի գծերով բաժանի՛ր մասերի և գունավորի՛ր՝ օգտվելով օրինակից:



Առաջադրանք 39. Եզրագծի՛ր ձեռքիդ ափը թղթի վրա, այնուհետև մատիտով և ջրաներկով շարունակի՛ր՝ պատկերելով ծառ:

Առաջադրանք 40. Ձեռքիդ ափը ներկի՛ր գուաշե տարբեր գույնի ներկերով և հորիզոնական կամ ուղղահայաց դիրքով դաջի՛ր թղթի վրա: Մատիտով ավարտիր նկարը:

ՈՒՍՈՒՑՉԻ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ (ամփոփիչ եզրակացություն)

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

1.



2.



3.



4.

5.



6.



7.

8.